

Ասոր քով հիւր եղած էր Քոխ: «Ժողովողեան մեծագոյն մասին դարձին (ի մահմետականութիւն) սկզբնաւորութիւնն եղած էր հոյսոյաժող մը, ինչպէս ամէն տեղ՝ ուր Մահմետի վարդապետութիւնը պիտի մուծուէր» (Քոխ, էջ 75):

Քոխի անցած ատեն Ճորոխի գծին այն մասը, որ Թորթուսի-ջրոյ Ճորոխ թափուելէն ետքը դէպ ի Արդուին կ'երթայ, տակաւին կը վերաբերէր ուրոյն ընդարձակ գաւառի մը, որուն կենդրոնն էր նոյն Արդուին (Քոխ, էջ 81—82): Ինճիճեան երկու գաւառ կը բաժնէ, Արդուին եւ Պարխալ (Ինճ., էջ 124, 130—132): Յամենայն դէպս զոնէ Ճորոխի բուն հովտը մինչեւ Արդուինի մօտերը՝ Տայոց կը վերաբերէր: Եւ այստեղ՝ Ճորոխի աջ ափին վրայ է արգի մահմետականացած զիւղը Իշխան (Կիպերտ՝ Irchan). Կիպերտ այստեղ նշանակած է իրաւամբ Մամիկոնեանց Արախանէ բերդը, որուն մասին մեր հին պատմութիւնն ողբերգական դրուագ մը պահած է (Փաւստոս Բուզ. Դ, Ժբ): Պատմագրին խօսքը կը ցուցնէ թէ Մամիկոնեանք Ճորոխի այս կողմն ալ մեծ կալուածներ ունէին: Որովհետեւ Վասակ Մամիկոնեան իւր զնդով